

000

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԵՔԻՍԹՆԵՐԻ ԳՐԱՌՄԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ**  
(Ընդհանուր ակնարկ)

**Ն. ՀԱՎՈՐՑԱՆ, Ա. ՍԱՀԱԿՅԱՆ**

Հեքիաթագիտության արդի պրոբլեմատիկայի շրջանակների լայնացման հետ ընդգծվում է հին գրառումների պահանջը: Մեզանում այդ պահանջը լրացնում են հայկական միջնադարյան ձեռագրերը, որոնցում պարփակված հեքիաթային սյուժեները, որքան էլ թվով սահմանափակ և շատ տեղերում վերախմբագրված լինեն, այնուամենայնիվ, փոքր-ինչ վերապահությամբ դիտվում են իբրև միջնադարյան գրառումների օրինակներ: Այդ յուրահատուկ գրառումներում գերազանցապես իշխում է իրապատում հեքիաթի ժանրը: Սակայն այդ ժանրը ուշադրության չի արժանացել ինչպես մեր ժողովրդական ստեղծագործությունների, այնպես էլ միջնադարյան գեղարվեստական արձակի ուսումնասիրության տեսանկյունից:

Մինչդեռ նյութի այն որոշակի քանակությունը, որը մենք ընկալում ենք իբրև հեքիաթ, հաճախ է արժանացել այնպիսի բանասերների ուշադրությանը, ինչպիսիք են Ն. Մառը, Գ. Տեր-Մկրտչյանը, Մ. Արեղյանը, Հ. Օրբելին և այլք<sup>1</sup>: Բայց եթև վերոհիշյալ բանասերները շեն հետաքրքրվել հարցի ժանրային կողմով և այդ նյութը մի ընդհանուր առակ հասկացության տակ դիտարկել են բանասիրական, բնագրագիտական, սոցիալական հարաբերությունների արտալոցման, պատմական, ճանաչողական արժեքի և այլ տեսանկյուններից, իսկ Կ. Մելիք-Օհանջանյանը «էջեր» ժողովածուով նպատակ է ունեցել ներկայացնելու ընդհանրապես հայ միջնադարյան արձակի նմուշներ՝ առակները և նմանատիպ ստեղծագործությունները դասելով մանրապատմներ անվան տակ, ապա բոլորովին այլ նպատակ ու բնույթ ունի Ա. Սրապյանի «Հայ միջնադարյան գրույցներ» աշխատությունը: Այստեղ հեղինակը խնդրը դնելով վեր հանել գրույցի ժանրային առանձնահատկությունները, բնագրերի մասում զետեղված տասից ավելի հեքիաթային սյուժեներից բացի, հանիրավի ուսումնասիրության մեջ իբրև գրույց է օգտագործում նաև շատ հեքիաթներ<sup>2</sup>:

Այսպիսով, հեքիաթագիտության տեսանկյունից հայ միջնադարյան գրական-գեղարվեստական արձակի ուսումնասիրության հարցը մինչև այժմ չի բարձրացվել:

Հեքիաթների ձեռագրային կյանքը սկսվում է 12—13-րդ դարերից, երբ հատուկենտ սյուժեներ՝ խառնված առակներին ու խրատներին, դարերի բանավոր ճանապարհից հետո առաջին անգամ գրի առնվելով անցնում են գոյատևման նոր եղանակի: Ավելի վաղ ժամանակների գրավոր աղբյուրներից հեքիաթների գոյության վկայություններ կարելի է գտնել միայն նրանցում պահպանված հեքիաթային տարրերի ազդեցությունների օգնությամբ: Նման աղբյուրների թվին են պատկանում ոչ միայն հայ պատմագրական երկերն ու ձեռագիր ժողովածուները, այլև թարգմանական գրքերը՝ «Հարանց վարքերը», միջնադարյան քրիստոնեական վկայերն ու պատմությունները, «Ոգեշահ խրատները» և այլն:

Ինչ խոսք, սրանք էլ իրենց հերթին ազդեցություն են ունեցել ժողովրդական բանահյուսության վրա: Այդ փոխազդեցությունը հետագայում այնքան է խորանում, որ 1480 թ. Արևմտյան Եվրոպայում կազմված և 1651 թ. (ըստ Ք. Տեր-Պավլյանի) հայերեն թարգմանված «Հայելի վարուց» ժողովածուի մի շարք սյուժեների՝ գրքային կամ ժողովրդական աղբյուրներից ծագած լինելու հարցը շատ դժվար է որոշել: Հեքիաթների հաճախակի գրանցումը հայկական միջնադարյան ձեռագրերում սկսվում է 15-րդ դ.: Հետագայում այդ երևույթը ստա-

<sup>1</sup> Март, Сборник притч Вардана, II часть, 1984, 1899, Գ. Տեր-Մկրտչյան, Հայկական, Վաղ-պատ, 1899, Մ. Արեղյան, Երկեր, հատ. Գ, Եր., 1970, И. Орбелъ, Избранные труды, т. 1, М., 1968 (Տե՛ս «Басни средневековой Армении»), Կ. Մելիք-Օհանջանյան, էջեր հայ միջնադարյան գեղարվեստական արձակից, Եր., 1957, և այլն:

<sup>2</sup> Ա. Սրապյան, Հայ միջնադարյան գրույցներ, Եր., 1969:

նում է գանգվածային ընդլայնում և իր գազաթնային է հասնում 17-րդ դ. վերջին, երբ իրար հետևից տպագրվում են համաշխարհային ուշ միջնադարյան մշակույթի մեջ անվիճելի արժեք ներկայացնող «Աղվեսագիրքը»<sup>3</sup>: Մի անգամից կրկու տասնյակ հեքիաթների մուտքը «Աղվեսագիրք»՝ ժողովրդական հեքիաթների գրառումների պատմության մեջ առաջին ամենանշանավոր իրողությունն է:

Անդհանուր առմամբ հեքիաթների միջնադարյան գրառումներից հայտնի են հիսունից ավելի սյուժեներ, որոնցից ավելի քան 30-ը ունեն իրենց միջնադարյան տարբերակները, իսկ գրեթե բոլորը տարբերակներ ունեն 19—20-րդ դդ. գրառումներում և այլ ժողովուրդների հեքիաթների ժողովածուներում: Հետաքրքիր է նշել, որ հայտնի է Հովհ. Քումանյանի մշակումներից քաջածանոթի «Ոսկու կարպը» հեքիաթի սյուժեի 6 միջնադարյան տարբերակ<sup>4</sup>:

Վերորբյալ թվերը, իհարկե, վերջնական չեն, հետագայում ավելի երկարատև ու մանրամասն որոնումները կարող են ի հայտ բերել նոր սյուժեներ և փոխել նրանց քանակի մասին մեր պատկերացումը, մանավանդ, եթե ամբողջությամբ ընդգրկվեն միջնադարյան առակների ժողովածուներում տարածված հեքիաթները: Որքան էլ ոչ վերջնական, այնուամենայնիվ միջնադարում գրառված սյուժեների այդ թիվը մոտ է իր սահմանին, որովհետև մեզ հասած հեքիաթների շեշտված իրապատում-բարոյախոսական բնույթը թույլ է տալիս ասելու, որ ոչ բոլոր իրապատումները կարող էին տալ բարոյախոսության այնպիսի հնարավորություն, որը պատշաճներ քրիստոնեական վարդապետության պատվիրաններին, խրատներին կամ գաղափարախոսական այլևայլ նկատառումներին: Այսպիսով, նման կարգի ստեղծագործությունների միջնադարյան գրառումների առաջին և կարևոր պայմանը վերջիններիս բարոյախոսությունն է: Հայտնի միջնադարյան գրառումներից միայն երեք սյուժե ունեն զվարճարար բնույթ, այն էլ մեկնություն շնորհիվ վեր է հանվել նրանց խրատական, իհարկե, վերացական, իմաստը ևս:

Ժողովրդական հեքիաթի միջնադարյան գրառումների նշված առանձնահատկություններից բացի կա նաև մի այլ յուրահատուկ գիծ. դա պայմանավորված է ժողովածուն կազմողների և գրիչների կողմից հեքիաթների խմբագրական մշակումներով և մեկնություններով: Նման միջամտությունները, որպես այդպիսիք, ինքնին հետաքրքիր են և հասկանալի, բայց առավել հետաքրքիր են և բարդ հեքիաթի պատմության տեսակետից, որովհետև հաճախ անհայտ ու անորոշ է միջամտության աստիճանը, իսկ երբեմն էլ այն ուղղակի աղավաղում է սյուժետային ընթացքը: Իսկ արդյոք աղավաղում է, թե ուղղակի կազմող կամ գրիչը արձանագրել է ինչպես կար, այսինքն 12—15-րդ դարերի իրականությունը հող եղե՞լ է նոր սյուժեների ձևավորման համար, թե արդեն ուշացած էր: Հայտնի միջնադարյան ավելի քան 50 սյուժեներից 40-ը գտնվում են արդեն ավարտուն վիճակում, իսկ մնացածը՝ կամ ձևավորման շրջանում, կամ էլ տարբալուծված-ծուլված են այլ բնագրերում: Առաջին երկու խմբի սյուժեների տարբերակները մեծ հաճախակիությամբ հանդիպում են 19-րդ դ. և հետագա գրառումներում, իսկ երրորդի սյուժեները մթազնված են և նրանց տարբերակները կոահելուց այն կողմ դժվար է որոշել: Ինչպե՞ս գնահատել այս փաստը, դժվար է ասել, բայց պարզ է, որ այս հարցերը էլ ավելի են բարձրացնում հեքիաթի միջնադարյան վկայությունների արժեքը:

Հեքիաթի միջնադարյան գրառումների բրբորդ առանձնահատկությունը նրանց անանունությունն է: Ժողովածուների գրիչների ու գրչության վայրերի անունները դեռևս որոշակի բան չեն ասում գրառումների ու ասացողների մասին: Այնուամենայնիվ, ավելի հավանական է այն ենթադրությունը, թե նրանք առանձին անձեր չէին, ոչ թե նրա համար, որ զուտ ասացող չկար, այլ որ զուտ գրառող չկար, և որ այդ երկու որակները միաժամանակ կրում էր նույն մարդը, գրառումների երախտավոր անանուն հեղինակը:

Ասացողի և գրառողի տարբեր ֆունկցիաների բնույթում մեզ է հասել համեմատաբար ավելի ուշ ժամանակից: 1860 թ. Առաքել Գրիգոր և Ալեքսանդր Բահաթրյանները Շուշի քաղաքում մայիսից-օգոստոս ամիսների ընթացքում Զարաթղի բարբառով (Շուշվա խոսվածք) գրի առան 61 հեքիաթ, որը և հանձնեցին Տիգրան Նավասարդյանին<sup>5</sup>: Վերջինս նրանցից մի

<sup>3</sup> «Գիրք առասպելաբանութեանց, որ ասի Աղուէսագիրք», Ամստերդամ, 1668, «Գիրք աշխարհաց և առասպելաբանութեանց, որ է Աղուէսագիրք», Մարսել, 1683, «Գիրք աշխարհաց և առասպելաբանութեանց, որ է Աղուէսագիրք», Լիվոնոս, 1698:

<sup>4</sup> Այլ հեքիաթային սյուժեների միջնադարյան գրառումների մասին ընթերցողը հիշատակություններ կարող է գտնել հետևյալ գրքում՝ «Հայկական ժողովրդական հեքիաթներ», բնագրերի պատրաստումը, ծանոթագրությունները և ցանկերը Ն. Ա. Հակոբյանի, Ա. Ս. Սահակյանի, Եր., 1980 (տե՛ս 4, 11, 20, 22, 23, 43, 46 ծանոթագրությունները):

<sup>5</sup> Հայ ժողովրդական հեքիաթների վաղ վկայություններից մեկն էլ կապվում է գերմա-

քանիսը հրատարակեց իր ժողովածուի («Հայ ժողովրդական հեքիաթներ») տարրեր պրակներում:

Գրառումները պարունակում են և՛ հրաշապատում, և՛ իրապատում հեքիաթներ, վերջիններս՝ գերազանցապես բարոյախոսական բնույթի: Բանահավաքները ամենայն հավանականությամբ ձգտել են հնարավորին չափ ճշգրիտ հաղորդել թե՛ բարբառային առանձնահատկությունները և թե՛ քնագրերի բովանդակությունը: Դրա վկայությունն է պատումի լակոնիզմը, բանավոր պատմվածքին հատուկ տրամաբանական անհարթությունների առկայությունը, տարրեր տեսակի հղկումների, շեղումների և սյուժետային ուղղումների (գրականացում) բացակայությունը: Իրապատում հեքիաթներում այն տեսանկյուն է նաև բարոյախոսության մեջ, որը օրգանապես ձուլվում է պատումին, որպես բարոյախոսական վերջարյան կամ հետևություն, ամրացվում նրան:

Իլուր այդ փաստերը օգնում են ուսումնասիրողին միայն տեքստաբանական վերլուծության հիման վրա հեքիաթները խմբավորել ոչ միայն ըստ տեսակների, այլև, փոքր ինչ վերապահությամբ, բոտ ասացողական արվեստի: Այսպես, Գրիգոր Բահաթրյանի գրառումների աղբյուրը ամենայն հավանականությամբ միևնույն ասացողն է, որովհետև նրանցում նկատելի է ռճավորման, պատումի ձևի և հաջորդականության նույն եղանակը, ասացողի համար նախընտրելի գործող անձանց նույն շրջանակը և պատումից-պատում նրանց նույն ֆունկցիաների պահպանումը և այլն:

Իհասարակության գրառումները, սակայն, ունեն և լուրջ բացթողումներ. բացի գրառման տեղի և ժամանակի նշումից, գրառումների մասին ուրիշ ոչ մի տեղեկություն չկա: Ամբողջությամբ մոռացված է գիտական ապարատը (տեղեկություններ ասացողի, նրա աղբյուրի, գրառման բնույթի, հանգամանքների մասին), չկա հիշատակություն գրառումների նպատակի և բանահավաքական որևէ պորբլեմի մասին, չեն տրվում բանահյուսական նյութի ընտրության և վերարտադրման սկզբունքները և այլն:

Սակայն պետք է հաշվի առնել, որ Բահաթրյանների գրառումները, որոնք առաջին օրինակն էին ոչ միայն սովյալ ժանրի, այլև ընդհանրապես հայ ժողովրդական ստեղծագործությունների հավաքման պատմության մեջ, կատարվել են փորձի, մշակված մեթոդիկայի, ճշտված մեթոդաբանական դիրքորոշումների և սկզբունքների կատարյալ բացակայության պայմաններում: Այդ տեսակետից Բահաթրյանների ներդրումը հայ բանագիտության մեջ (իր բոլոր արժանիքներով և թերություններով հանդերձ) պետք է գնահատել որպես անվիճելի գիտական սխրանք:

Այսպիսով, 19-րդ դ. երկրորդ կեսից, երբ հայ բուրժուազիայի ազգային գաղափարախոսության ձևավորման ու քաղաքային հասարակական-մշակութային կյանքի աշխուժացմանը զուգընթաց հայ մշակույթի զարգացման մեջ իշխող դարձավ միասնականության միտումը, տեղական-գավառական մշակութային երևույթները վեր էին հանվում քաղաքային ասպարեզ և համազգային կուլտուրական արժեք ստանում: Մտավորականության կողմից հստակ գիտակցված այս քաղաքականության արդյունք պետք է համարել նաև ժողովրդական հեքիաթների հանդեպ հետաքրքրության աճը: Իզուր չէ, որ հեքիաթների գրառումները գիտական նպատակներ չէին հետապնդում: Նրանք վերածվելով համազգային կուլտուրական փաստի՝ կոչված էին նպաստելու ազգի վաղնջական սովորույթների, հասարակական բարքերի ճանաչմանն ու խոր անցյալի պատմության վերականգնմանը: Այսինքն, մեր առաջին բանահավաքների համար հեքիաթները (և այլ ժողովրդական ստեղծագործություններ) ներկայացնում էին ոչ այնքան գիտական արժեք, ասինք, օրինակ, ժողովրդական գեղարվեստական մտածողության պատմության տեսանկյունից, որքան ճանաչողական արժեք՝ ժողովրդի կյանքի իրական պատմության տեսանկյունից:

Հայկական ժողովրդական հեքիաթների հրատարակման պատմությունը, սակայն, սկսվում է առաջին գրառումներից ավելի քան 10 տարի հետո, 1876 թ. լույս է տեսնում հայ ժողովրդական տեղեկագործությունների շեմ սիրահար, անխուշ բանահավաք Գարեգին վարդապետ Սրվանձտյանցի «Մանանայ» ժողովածուն: Այն իր բաղադրությամբ բազմատարր գիրք է, որում Վասպուրականի բանահյուսության և ազգագրության վերաբերյալ տրված հանգամանակից տեղեկությունները վկայում են նրա կազմողի հատուկ նշատակագրմանը: Վանի աշխարհագրությամբ, բուսական ու կենդանական աշխարհի մասին օկնարկներով, բնակչության կազմի, նրա գրաղմուտի, հավատալիքների, ծեսերի ու ավանդությունների նկարագրություններով Գ. Սրվանձտյանցը ձգտել է ներկայացնել ազգի կազմավորման ու զարգացման միասնական պրոցեսի մեջ համահարթվող տեղական այն իրողությունները, որոնցով հարստանում

նացի բարոն Հարստհատուգենի անվան հետ, որը 19-րդ դ. սկզբին Հայաստանում եղած ժամանակ, շիմանալով հայոց լեզուն, իր հայրենակից Պյոտր Նիլի և Խաչատուր Աբովյանի քնուկ թարգմանությամբ ձևոր է բերում Արարատյան շրջանի 24 հեքիաթներ:

և առանձնանում է նաև տեղի ժողովրդական բանավոր ստեղծագործությունը: Այլ խոսքով, բանահյուսական նյութերի գրառումը Գ. Սրվանձությանցի համար ժողովրդի պատմության, հոգեբանության ու կենցաղի առանձնահատկությունների բմբունման անհրաժեշտ նախադրյալն է: Այդ չափանիշներով էլ նա արժեքավորում է ժողովրդական հեքիաթը:

Գ. Սրվանձությանցը հեքիաթում տեսնում էր այնպիսի բարոյախոսություն, որը դրվատում էր հոգու արիությունը և մարդկանց մղում նմանօրինակ առաքինությունների: Փորձելով բաժանել հեքիաթը ըստ սյուժետային տարրերի (ուղևորություն, հեռավոր և անծանոթ աշխարհներում պատահած դիպվածներ, հակառակորդների կամ հարազատների նենգություն, սիրահարություն և այլն), նա հատուկ ընդգծում էր նրա բարձր-ֆանտաստիկ լարվածությունը:

Գ. Սրվանձությանցի նկատումներն իրենց անվիճելիությամբ հանդերձ, չէին հավակնում լինել ժանրի վերլուծություն: Սակայն նրանց գիտական արժեքը կասկածից վեր է, որովհետև դրանք հենվում էին հետազոտողի և ասացողական միջավայրի անմիջական, կենդանի կապի վրա, բխում էին սեփական գրառումներից և դիտարկումներին:

«Մանանան» պարունակում էր ինը հեքիաթ, իսկ նրան կառուցվածքով համարժեք «Համով-հոտով» ժողովածուն՝ 26 հեքիաթ, որոնք ներկայացնում են Վանի, Տիգրանակերտի, Ակնի բարբառները:

Բանահյուսական բնագրերի հրատարակման սկզբունքները Գ. Սրվանձությանցը շարադրել է «Համով-հոտով» ժողովածուում. դրանք նախ և առաջ ենթադրում են հարազատ մնալ սկզբնաղբյուրին, որտեղ, ինչպես իրավամբ նկատել է հեղինակը, արտացոլվում են ոչ միայն սովյալ ժողովրդի աշխարհայացքն ու յուրահատուկ մտածողությունն ընդհանրապես, այլև որևէ առանձին շրջանի ազգագրական յուրահատկությունը մասնավորապես. «...Ձգույշ գտնված եմ բառին և մտքին իսկությունը պահելու, որքան կրցեր եմ: Կտեսնվի տարբերություն միևնույն երգի և միևնույն հեքիաթի, որու նկարագրական մասերը կիսփոխվին և կհարմարցնեն իրենց ունկնդրաց ծանոթ նկարագրներուն. կենցաղն՝ կենցաղին, սովորությունը՝ սովորության. զորօրինակ ակնցին՝ կամուրջի, շուկայի, պանդխտության, Սարա, Հալեբի և մինչև Փարիզի ու Ամերիկայի անունը կուտա: Երգանցին՝ լեռն, ձոր, եզն, այգի, անտառ, հանք և այլն կհիշե, ինչպես պարզ կերևի մտադիր եղողին»:

Այնուամենայնիվ Գ. Սրվանձությանցը չի հրաժարվել բնագրերի լեզվա-ուճական մշակումներից ու ուղղումներից, իր հեղինակային միջամտությունը պատճառաբանելով ինչպես գրառման, այնպես էլ բանավոր պատումի անկասարելիությամբ: Այդ հանգամանքը, ինչպես և գրառումների մասին անհրաժեշտ ծանոթագրությունների բացակայությունը, իչեցրել են նրանց գիտական արժեքը և դժվարացրել հեքիաթների լուրջ ուսումնասիրությունը:

Այնուամենայնիվ, մեծ է Գ. Սրվանձությանցի՝ ժողովրդական հեքիաթների գրառումների ու հրապարակումների նշանակությունը, որովհետև նրանցով հաստատվեց ժողովրդական ստեղծագործությունների գրառման ավանդույթը:

Գ. Սրվանձությանցի ակտիվ հրատարակչական աշխատանքներին համընկավ ճանաչված բանահավաք Տիգրան Նավասարդյանի գործունեության սկիզբը: 1881 թ. «Արարատ» ամսագրի 12 համարի հավելվածում Տ. Նավասարդյանից առաջին անգամ տպագրվում է երկու գրառում («Հեքիաթ-հեքիաթ պապս», «Արջի ջոթթը»): 1882 թ. առանձին գրքույկներով հրատարակվում են «Հայ ժողովրդական հեքիաթներ» ժողովածուի առաջին երկու պրակները, որոնք պարունակում էին 12 հեքիաթ՝ գրառված Վաղարշապատում, արարատյան բարբառով: Հետևյալ տարիներին մինչև 1903 թ. հաջորդաբար հրատարակվում են ժողովրդական հեքիաթների 8 գրքեր ևս: Ընդհանուր առմամբ Տ. Նավասարդյանը հրատարակել է շուրջ 80 հեքիաթ արարատյան, Վանի, Ղրիմի և այլ բարբառներով: Նավասարդյանի գրքույկներում տեղ գտան նաև Բահաբրյանների (Շուշի), Անանյանի (Վան), Մակինյանի և Զաքար Ումիկյանի (Ղրիմ) և այլոց գրառումները<sup>6</sup>:

Ժողովրդական հեքիաթների գրառման և հրատարակման անհրաժեշտությունը Տ. Նավասարդյանը բացատրում էր տարբեր տեսանկյուններից: Նախ՝ դրանք ընթերցանության օգտակար նյութ են, ժողովրդի պատմական անցյալի, նրա ստեղծագործական հանճարի անհատնում ուժի և ժառանգականության վկայություն, երկրորդ՝ մեր բանագետների և ազգագրագետների ուսումնասիրությունների անհրաժեշտ առարկա: Բանահյուսական նյութի բառացի գրանցման մշտական հոգածությունը, բարբառային առանձնահատկությունները և լեզվա-ուճական նուրբ երանգները պահպանելու ձգտումը, զավառական բառերի հավելված-բառարանը նյութ էին տալիս նաև լեզվաբանական ուսումնասիրությունների համար:

<sup>6</sup> Գ. Սրվանձությանց, Երկեր, հատ. 1, Եր., 1978, էջ 419:

<sup>7</sup> Հեքիաթների հրապարակումը շարունակվեց «Արարատ» ամսագրի 1882 թ. 1, 2, 3, 4, համարներում:

<sup>8</sup> Տ. Նավասարդյանի բանահավաքչական և հրատարակչական գործունեության մասին տե՛ս ՀԺՀ, հատ. 2, Եր., 1959, (հատորի ծանոթագրությունների նախաբանը):

ինչպես ձևագիրը, այնպես էլ «Հայ ժողովրդական հեթանոսների» ժողովածուների սեփական օրինակները վկայում են բանահավաք-հրատարակիչի բնագրագիտական ծանր ու խորաքնին աշխատանքը, որ նա կատարել է ասացողական պատումի բարբառային յուրահատկությունները, սյուժեի զարգացման տրամաբանությունը և գեղարվեստական արժանիքները պահպանելու նպատակով: Սակայն Տ. Նավասարդյանին շնչողովեց խուսափել ժամանակի հայ բանահավաքների ավանդական սխալներից. բացի գրառման տեղի ու գրառողի անվան հիշատակումից, այստեղ ևս մյուս տեղեկությունները մնացին անտեսված: Բացակայում էր գրառման տեղեկանքը, թե ե՞րբ, ումի՞ց, ի՞նչ հանգամանքներում է գրի առնվել և այլն:

Համենայն դեպս Տ. Նավասարդյանի հրատարակությունները, ավելի քան իր ժամանակի որևէ այլ բանահյուսական ժողովածու, գրավեցին ընթերցող հասարակության ուշադրությունը: Ամենից առաջ դա պայմանավորված էր Նավասարդյան մարդու և բանասերի կերպարով, որ անտեսել էր իր անձնական բարեկեցությունն ու հանգստությունը հանուն ժողովրդի ամենամեծ հարստության՝ նրա բանավոր ստեղծագործության փրկության և պահպանման: Տ. Նավասարդյանի այդ առասպելական նվիրվածությունը դարձաբեր էլ դեռևս իր ժամանակակիցներին՝ Բաֆթուն, Հովհ. Հովհաննիսյանին, Մ. Աբելյանին և շատ ուրիշների: Մ. Աբելյանը «Հայ ժողովրդական հեթանոսների» հերթական գրքերից մեկի հրատարակման առիթով գրում է. «Պ. Նավասարդյանը մեզնում միակն է, որ շարունակաբար հոգ է տանում մի ապերախտ, բայց կարևոր գործ կատարելու,— ժողովրդական բանավոր արդյունքները ժողովելու և հրատարակելու»:

Տ. Նավասարդյանը ոչ միայն բանահավաք էր, այլև կրթող, հետևողական ու գործուն պրոպագանդիստ: Իր ելույթներով, հոդվածներով ու հայտարարություններով, որոնք պարբերաբար տպագրվում էին մամուլում և իր յուրաքանչյուր գրքի վերջին էջերում, նա հայ մտավորականությանը հորդորում էր նպաստել հայ ժողովրդի ու նրա պատմության առաջ իրենց սրբազան պարտքի կատարմանը: Եվ իր այդ առաքելության մեջ Տ. Նավասարդյանին շատ բան հաջողվեց:

19-րդ դարի 80—90-ական թթ. լույս տեսան նաև Գևորգ Տեր-Աղեքսանդրյանցի<sup>10</sup> «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը», Գարեգին Հովսեփյանի «Փշրանքներ հայ բանահյուսության»<sup>11</sup>, Գևորգ Շերենցի «Վանա սազ»<sup>12</sup> ժողովածուները, որոնք արդյունք էին հեղինակների երկարատև բանահավաքչական աշխատանքների<sup>13</sup>: Այդ ժողովածուները, ինչպես երևում է վերնագրերից, բնույթով բազմատարր են, նրանցում ամփոփված նյութերի զգալի քանակությունը կազմում են հեթանոսները (համապատասխանաբար՝ 50, 3, 24): Ժողովածուների բոլոր նյութերը միավորված էին նպատակի միասնությամբ և բանահյուսական երևույթների ու փաստերի միևնույն գնահատականով<sup>14</sup>: Բանավոր ստեղծագործության մեջ տեսնելով ժողովրդական կյանքի գեղարվեստական արտացոլումը, ժողովրդի յուրահատուկ միտքն ու հոգին, նրա բարբառային լեզվի հարստությունը, հեղինակները իրենք որոշեցին այս շափանիշներին համապատասխան տեղեկատուների (ասացողների) շրջանը<sup>15</sup>: Նրանք բոլորն էլ համամիտ էին իրենց գրառումները բանավոր պատումին առավելագույնս մոտեցնելու ձգտման մեջ: «...որքան կարելի էր,— գրել է Շերենցն իր նշված գրքում,— ջանացինք մի մասն (խոսքը ժողովրդական ստեղծագործության մասին է) հավաքելու բուն այն լեզվով, բարբառով և հնչյունով, ինչպես որ լսել ենք ժողովրդի բերնից, աշխատելով միշտ պահել բանի և խոսքի, արտասանության և առողանության իսկությունը»:

Այդ հետևությունները, սակայն, շնայած իրենց ճշմարտացիությանը, բանահավաքչության արվեստի բարդ համակարգի միայն մի մասն էին: Կենտրոնացնելով ուշադրությունը միմիայն

<sup>9</sup> «Նոր Դար», 1891, № 137, տե՛ս նաև «Մշակ», 1882, № 238, «Արձագանք», 1884 թ., № 21, «Տարազ», 1894, № 10 և այլն:

<sup>10</sup> Գ. Տ. Աղեքսանդրյանց, Թիֆլիսեցոց մտավոր կյանքը, մասն Ա, Թիֆլիս, 1885:

<sup>11</sup> Գ. Հովսեփյան, Փշրանքներ հայ բանահյուսության, Թիֆլիս, 1892:

<sup>12</sup> Գ. Շերենց, «Վանա սազ» հավաքացույց Վասպուրականի ժողովրդական երգերի, հեթանոսների, առածների և հանելուկների. առաջին մաս, Թիֆլիս, 1885, երրորդ մաս, 1899:

<sup>13</sup> Գ. Տեր-Աղեքսանդրյանը իր ժողովածուի նյութը թիֆլիսահայերի մեջ հավաքել էր 26 տարիների ընթացքում:

<sup>14</sup> Նրանք նպատակագրված ծանոթացնում էին ընթերցողին առանձին ազգագրական շրջանի բանավոր ստեղծագործության հետ:

<sup>15</sup> «Հավաքել և մտցնել ժողովածուիս մեջ շէր կարելի բոլոր լսածը, այլ դորս համար դիմում էի ես ավելի ճիշտ աղբյուրին՝ այն է բուն թիֆլիսեցի պատավ և անգրագետ կանանց և մասամբ ծեր և անգրագետ տղամարդկանց, որոնք՝ հեռու զանազան ազդեցություններից, կարողացել են պահպանել իրանց պապերից հասած ավանդությունը սրբությամբ» (տե՛ս Գ. Տեր-Աղեքսանդրյան «Թիֆլիսեցոց մտավոր կյանքը»):

պատումի վրա, ժողովածուների կազմողները փաստորեն արհեստականորեն նրանցից կտրում էին պատմողի՝ որպես գեղարվեստական խոսքի կրողի անհատականությունը, անտեսելով նրա հետ կապված բազմաթիվ գիտական պրոբլեմները:

19-րդ դ. վերջին քառորդում ժողովրդական ստեղծագործությունների նկատմամբ հայ պարբերական մամուլի հետաքրքրությունը և կոնկրետ գրառումների խրախուսմամբ բանահավաքական գործը վերջնականապես ստացավ համազգային նշանակություն: Այդ բանում մեծ դեր է խաղացել հատկապես «Արարատ» ամսագիրը: Նախ երկչուղած ու անվստահ, ապա ավելի համարձակ ու մասնագիտորեն «Արարատը» տրամադրում էր իր էջերը ժողովրդական բանավոր ստեղծագործություններին: Այդ ակնակետից հիշատակելի է Սարգիս Հայկունու գրառումներին ցմեկի մասին գրախոսականը՝ Ն. Ք. ստորագրությամբ<sup>16</sup>: Բավականին ճիշտ կողմնորոշվելով գրառման հիմնական սկզբունքների և արվեստի հարցում, գրախոսը բնթերցողներին ուշադրությունը հրավիրում է ասացողի վրա, որովհետև, ըստ հեղինակի, ասացողը ոչ միայն շոր կենսագրական փաստերի կրող է, այլև անհատականություն թե դեպի իր պատումը և թե դեպի իր լսարանը ունեցած յուրահատուկ վերաբերմունքով:

«Արարատի» միջամտությամբ առաջին անգամ հայկական գրառումների պատմության մեջ արձանագրվեց ասացողից նույն ստեղծագործության կրկնակի գրառման փաստը: Դա արդեն գրառումը նախօրոք մշակված գիտական նպատակին ծառայեցնելու օրինակ է, մի բան, որի անհրաժեշտությունը գիտական գրառումների պրակտիկայում գիտակցվեց և որոշ կիրառություն ստացավ տասնամյակներ անց:

Այսպիսին էր հայ ժողովրդական հեքիաթների գրառման, հրատարակման և նրանց գիտական գնահատման ընդհանուր պատկերը 19-րդ դարի երկրորդ կեսին: Այն իր բոլոր վերորերյալ թերություններով և առավելություններով հանդերձ ամուր հիմք դարձավ 20-րդ դ. առաջին երկու տասնամյակներում ժողովրդական հեքիաթների գիտական և արդյունավետ գրառումների համար:

Դարասկզբին հեքիաթների հավաքման պատմության մեջ սկսվեց մի նոր փուլ: Այն բնորոշվում էր նրանով, որ առանձին բանահավաքների ջանքերը համախմբվեցին խոշոր ազգագրական հանդեսների շուրջ և նրանց գործունեությանը տրվեց որոշակի գիտական ուղղվածություն: 1901 թվականից Գ. Խալաթյանցի ղեկավարությամբ պարբերաբար հրատարակվեցին «Էմինյան ազգագրական ժողովածուների» գրքերը, որոնց ընդհանուր նպատակների և ծրագրերի մեջ կարևոր տեղ էր գրավում ժողովրդական բանավոր ստեղծագործությունը:

Գ. Խալաթյանցը դեռևս 80-ական թվականների սկզբներին ռուս բանագետների օրինակով կազմել է հայ բանահավաքչական աշխատանքների ծրագիր-ուղեցույց, որը ամփոփվեց «Մրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորույթների»<sup>17</sup> գրքում, որպես մի առանձին բաժին: Այդ ծրագիրը տարիներ շարունակ մնացել էր որպես զուտ տեսություն և իր գործնական կիրառությունը ստացավ միայն 20-րդ դարի սկզբին: Մրագրի ամենամեծ հետևողը դարձավ Սարգիս Հայկունին, որը իր բանահավաքչական գործունեությամբ անմիջապես կապվեց «Էմինյան ազգագրական ժողովածուի» հետ:

Սարգիս Հայկունին, որպես բանահավաք, արժանի է հատուկ ուշադրության: Գեոևս անցյալ դարի 80-ական թվականներին նվիրվելով բանահավաքի կոչմանը, նա տարիներ շարունակ գրի առավ ժողովրդական ստեղծագործություններ, որոնք ընդգրկեցին հայ բանահյուսության թեմատիկ և ժանրային ողջ հարստությունը, այդ թվում նաև հեքիաթները: Ս. Հայկունու գրառած հեքիաթներից տպագրվել են ավելի քան 100 հեքիաթ, որոնցից իննսունը «Էմինյան ազգագրական ժողովածուում»: «Հեքիաթները,— գրում էր Խալաթյանցը Հայկունու հավաքածուի մասին,— բոլորն էլ վերին աստիճանի հետաքրքրական են ըստ բովանդակության՝ շուշափելով բազմաթիվ նույն և նման եղանակներ ընդհանուր հեքիաթային գրականությունից, և արժանի առանձին մտադրության լեզվի ակնակետից (թեև գրի են առելված նորա ոչ հատկապես լեզվաբանական նպատակով), ներկայացնելով 15-ից ավելի հայ բարբառների օրինակներ»<sup>18</sup>:

Ս. Հայկունու հեքիաթները աչքի են ընկնում լայն աշխարհագրությամբ (Արարատ, Մոկս, Բուլանիս, Խոնուս, Ալաշկերտ, Արճեշ, Խոյ և այլն) և հեքիաթային սյուժեների բազմազանությամբ: Սակայն ամենակարևորն այն է, որ գիտական գրառման և ասացողի մասին անհրաժեշտ տեղեկագրության սկզբունքը, որը անվերապահորեն ընդունվել էր էպոսի գրանցման ժամանակ, Ս. Հայկունու շնորհիվ սկսվեց օրինաչափորեն կիրառվել նաև հեքիաթների համար: Ժողովրդական ստեղծագործության պրոպագանդան դարասկզբին խթանվեց նաև մի շարժանք հեղինակավոր հանդեսի կողմից, որի նախաձեռնողն ու անփոփոխ խմբագիրն էր ա-

<sup>16</sup> Տե՛ս «Արարատ», Վաղարշապատ, 1895, № 9:

<sup>17</sup> Մրագիր հայ ազգագրության և ազգային իրավաբանական սովորույթների, Մոսկվա, 1887:

<sup>18</sup> Էմինյան ազգագրական ժողովածու, հատ. Բ, Մոսկվա-Վաղարշապատ, 1901, էջ VIII:

կանավոր ազգագրագետ-բանահավաք Երվանդ Լալայանը: Նրա Խոանդուն ջանքերի շնորհիվ է, որ ժամանակակից ազգագրությունն ու բանագիտությունը ժառանգություն են ստացել հայկական տարրեր գավառների ազգագրական նկարագրություններ և ժողովրդական ստեղծագործությունների մեծ պաշար:

Ե. Լալայանի «Ազգագրական հանդեսում» տպագրվում էին ինչպես մյուս բանահավաքների (Ա. Առաքելյան, Արթուրյակ և այլն), այնպես էլ իր սեփական գրառումները: Լալայանի, որպես ազգագրագետի, համար ուշադրության առաջին պլան մղվեց ոչ թե ժողովրդական ստեղծագործության ժանրային պատկանելությունը, այլ նրա կենցաղավարման շրջանը: Այս ճանապարհով նա փորձեց տալ առանձին շրջանների բանահյուսական աստիճանի պատկերը: Այսպես առաջացան որոշակի բաժանումներ (Նոր Բայազետի գավառի բանահյուսություն, ԱՇ, 1910 թ., Ապարանի բանահյուսություն, ԱՇ, 1910 թ., Վասպուրականի բանահյուսությունից, ԱՇ, 1912 թ. և այլն): Այդ պատկերները հատկապես ամփոփ ու լրիվ էին հեքիաթների տեսակետից: Նրա վկայությունն է Ե. Լալայանի հրատարակումների մեջ հեքիաթների թվային գերակշռությունը: Բազմաթիվ հեքիաթներ են պարունակում «Ազգագրական հանդեսի» մի շարք համարներ, «Պատավաշտներ» և «Մարգարիտներ» հայ բանահյուսության» եռահատոր ժողովածուն:

Նախասովետական ամբողջ բանահավաքական գործունեության պակար կազմեց բանահավաքների արշավախումբը Արևմտյան Հայաստան 1916 թ., որի նախաձեռնողն ու կազմակերպիչն էր Ե. Լալայանը: Արշավախմբի արդյունքները, հատկապես հայ ժողովրդական հեքիաթների ուսումնասիրման առումով, ապշեցուցիչ էին. գրավեց մոտ 1000 հեքիաթ: Սակայն եթե հեքիաթագիտության համար կարևորը հեքիաթների քանակն ու նրանից բխող որակային արժեքներն են, ապա գրառումների պատմության մեջ այդ արշավախմբի նշանակությունը այլ էր: Առաջին անգամ մեր բանահավաքության մեջ այդ կիրառվեց արշավամբային գրառման մեթոդը, որի անհրաժեշտությունը, Լեզենի պատճառով արևմտահայ բանահյուսության ընդհանուր մահացման պայմաններում, ձիշտ կուսհեց և ժամանակին ի կատար ածեց Ե. Լալայանը:

Ժողովրդական հեքիաթների հավաքման գործում կարևոր դեր խաղաց նաև հայ մտավորականների անհատական նախաձեռնությունը: 19—20-րդ դդ. սահմանադրիչի Հայաստանի տարրեր վայրերում կատարվել են ժողովրդական հեքիաթի շատ այլ գրառումներ, որոնց հեղինակներից հիշատակելի են Խ. Շահնազարյանը, Հ. Մանասյանը, Աղ. Ափրիկյանը, Աղ. Մխիթարյանը, Ա. Թովմասյանը, Ե. Պեղալյանը և շատ ուրիշներ: Նշված բանահավաքների մեջ արդյունավետ էր բանահավաք-բանասեր Սահակ Մովսիսյանի (Բենես) բանահավաքական գործունեությունը: Երկար տարիներ իր մանկավարժական գործին զուգընթաց նա Մուշ-Բուլանրիսի գյուղերում հավաքեց բազմաթիվ ժողովրդական հեքիաթներ ու մանրապատում գրույցներ, որոնք ամբողջացրին մեր պատկերացումները Հայաստանի ազգագրական կարևոր շրջաններից մեկին՝ Մշո ժողովրդական ստեղծագործության մասին:

Ընդհանրացնելով նախասովետական շրջանի մեր հայտնի ու անհայտ բանահավաքների գրառումների արդյունքները, Երախտագիտությանը պետք է նշենք, որ մենք ժառանգություն ստացանք ժողովրդական հեքիաթների մի ողջ կուլուրտ, որի նշանակությունը ընդհանրապես հայ ազգագրության ու բանագիտության և մասնավորապես ընդհանուր հեքիաթագիտության համար անգնահատելի է:

Սովետական Հայաստանում հայ բանահավաքության պատմության մեջ ոկավեց նոր շրջան: Այն բնորոշվում է նրանով, որ գրառումների գործի կազմակերպումը անցավ պետական գիտական ու կրթական հիմնարկներին և իրականացվեց ավագ ու նոր սերնդի գիտնականների կողմից (Մ. Արեղյան, Ե. Լալայան, Կ. Մելիք-Օհանջանյան, Ա. Ղանալյան և այլն): Քանահավաքական աշխատանքների կազմակերպչական կենտրոններից էին նախ՝ ՀՍՍՀ ԳԱ Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտը և ժողովրդական ստեղծագործության հանրապետական տունը, իսկ հետո՝ ԳԱ Ազգագրության և հնագիտության ինստիտուտն ու պետական համալսարանը: Աստիճանաբար աճեց հայ բանագետների մի նոր սերունդ, որի գիտական գործունեությունը սկսվեց բանահյուսական նյութի գրառման բովում:

Հեքիաթների հավաքման պատմության մեջ հատկապես արգասարք էին ետպատերազմյան տարիները, երբ սկսվեց սփյուռքահայերի մասսայական ներգաղթը Սովետական Հայաստան: Հայրենադարձներից գրաված հեքիաթները հատկապես արժեքավորվում են այն դեպքում, երբ նրանց աղբյուրը լինում է նախկին հայրենի բնաշխարհ՝ Մուշը, Մոկսը, Վանը և այլն:

Հայ ժողովրդական հեքիաթների գրառման, հրատարակման ու պրոպագանդման ողջ պատմության մեջ ամենանշանավոր իրադարձությունը, սակայն, հեքիաթների գրառումների գիտական լիակատար հրատարակության ծրագիրն էր, որի իրագործումը բանագետ Ա. Նազիկյանի ղեկավարությամբ սկսվում է 1959 թ., բազմահատորակի առաջին հատորի լույս ընծայումով և շարունակվում է մինչև օրս:

Ընդհանուր առմամբ ժողովրդական հեքիաթների նոր գրառումներին հատուկ է գրանցման

գիտական սկզբունքների պահպանումը, վաղուց անհրաժեշտ է դարձել տեղեկատուի ձայնագրումը և ծապավենից բանահյուսական բնագրի վերծանումը:

Հայ ժողովրդական հեքիաթների գրառման պատմության տրամաբանությամբ մեծ դեր է վիճակված մեր ժամանակի (60—80-ական թթ.) բանահավաքներին, որովհետև ավանդական բանահյուսությունը ապրում է իր պատմականորեն օրինաչափ քայքայման, մահացման շրջանը: Հայ բանահյուսության արդի վիճակը բնորոշվում է նրանով, որ ավանդական ժողովրդական ստեղծագործությունները երբեմնի կիրառական գոյությունից անցել են հիշողական գոյության, սովյալ ստեղծագործությունները հիշողության մեջ ննջում են այնքան ժամանակ, քանի դեռ ապրում է նրա կրողը: Իսկ անկման ամենավերջին սահմանում գտնվող բանահյուսական ժանրերից է հեքիաթը, որը պետք է լինի ամեն մի բանահավաքի օշադրության կենտրոնում: Ժամանակակից պայմաններում դեռևս ղոյատեղող ժողովրդական հեքիաթը մեկընդմիշտ կորուստից փրկելու համար հարկավոր է շրվարարվել անհատական գրառումների արդյունքներով և լայնորեն կիրառել արշավախմբային գրառման եղանակը:

**II. А. АКОНЯН, А. С. СААКЯН—Очерк истории записи армянских народных сказок.—**В статье история записи армянских народных сказок представлена четырьмя периодами.

В средневековый период сказители и собиратели еще не были дифференцированы, а сказки (в основном назидательно-бытовые) в их восприятии представляли собой утверждение или отрицание определенных сторон человеческих прав.

В просветительский период (с начала по третью четверть XIX века) акцентировалась лишь культурная роль собирателя, а сама сказка воспринималась как хранилище древностей истории народа.

В профессиональный период (последняя четверть XIX и первые десятилетия XX вв.) помимо собирателя на первый план стал выдвигаться и культурный субъект сказителя, что порождало требование точного воспроизведения диалекта и подробной записи его биографии, призванные создать целостную картину историко-этнографической среды сказки и отметить специфику ее регионального выражения.

В новый советский период сказки воспринимаются как часть художественного наследия народа; их собирание поощряется и организуется государственными учреждениями, а сам сказитель оценивается как автор рассказанного им варианта, а поэтому последний нуждается в подробной фиксации обстоятельств записи.